

«ՔՆԱԾ ԳԵՂԵՑԿՈՒՅԻՆ» ՀԵՔԻԱԹԻ ՄԻՋՆՇԱՆԱՅԻՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ընդունված է համարել, որ թարգմանությունը մի համակարգի նշանների միջոցով արտահայտված իմաստի վերարտադրումն է մեկ այլ համակարգի նշաններով: Ռուս լեզվաբան Ռոման Յակոբսոնն իր աշխատություններում առաջ է քաշում միջնաճառին թարգմանության տեսություն, համաձայն որի՝ թարգմանիչն իր ուշադրությունը կենտրոնացնում է ոչ այնքան լեզվական նշանների, այլ թարգմանաբար հաղորդվելիք տեղեկատվության վրա: Հետևյալ մոտեցումը հնարավորություն է տալիս թարգմանիչներին ներմուծել տեքստի հասկացությունը երաժշտության, կինոյի կամ արվեստի այլ ոլորտներում¹:

Բազմիցս նշվել է, որ ցանկացած հաղորդակցական գործընթաց, այդ թվում նաև թարգմանությունը, լիաժեք չէ. միշտ կա տեղեկատվության մասնակի կորուստ: Եվ ի տարբերություն թարգմանության այլ տեսակների, միջնաճառին թարգմանությունը հենվում է հենց այս դրույթի վրա: Բաժանելով բնօրինակը իմաստային շերտերի՝ թարգմանիչը ինքն է որոշում, թե հաղորդագրության որ հատվածը պետք է «զոհաբերել»: Այստեղ մենք փորձ ենք անում ուսումնասիրել «Քնած գեղեցկուհին» հեքիաթի միջնաճառին թարգմանությունների տարբերակները ժամանակակից արվեստի, և հատկապես նորաձևության մեջ՝ հիմք վերցնելով հեքիաթի՝ Գրիմ եղբայրների տարբերակը: Հիշեցնենք, որ հեքիաթը պատմում է, թե ինչպես է կախարդված արքայադուստրը խորը քուն մտնում և արթնանում միայն արքայազնի համբույրից:

Նորաձևության ամսագրերի էջերին լուսանկարիչները իրենց «քնած գեղեցկուհիներին» պատկերում են նմանեցնելով հեքիաթի հերոսուհուն, և միևնույն ժամանակ, մատուցում մոդելներին անսպասելի մեկնաբանությամբ: Փորձել ենք խմբավորել պատկերներն ըստ հետևյալ հատկանիշների.

1. Բոլորիս մոտ «Քնած գեղեցկուհին» առաջին հերթին ասոցիացվում է այսպես կոչված «թալկացած աղջկա» երևույթի հետ: Այդ պատճառով մոդելները ընդունում են դիրքեր, որոնք հիշեցնում են քնած մարդու՝ պառկած են կամ աչքերը փակ են, օր.² Մարտ ամսվա ամերիկյան Vogue ամսագրի համար երգչուհի Ադելի նկարահանումներն արվել էին հենց այս հեքիաթի մոտիվներով:

¹ Steiner G. *After Babel. Aspects of Language and Translation*. Oxford, Oxford University Press, 1992

եղիս հագնված հերոսուհին քնած էր ձևանում կամ պարզապես պառկած էր կախարդական անտառ հիշեցնող տեղանքում, ինչը ոչ պակաս կարևոր է հեքիաթային մթնոլորտ ստեղծելու համար²:

• Իսպանական Tiger ամսագրի համար լուսանկարիչ Թոմաս Լոռը նկարահանել էր «Քնած գեղեցկուհին» կոնցեպտուալ ֆոտոշարքը: Լուսանկարիչը աշուն-ձմեռ հավաքածուները զովագողող մոդելին անվանել էր «Քնած գեղեցկուհի»՝ վերցնելով հեքիաթից միայն մեկ հատկանիշ՝ աղջկա փակ աչքերը: Ամսագրում պատկերների տակ մոդելը նկարագրված է որպես մրսած որբուհի, որին ուզում են գրկել, տաքացնել: Այս նկարագրությունը հիշեցնում է «Քնած գեղեցկուհին» հեքիաթի հայկական տարբերակներից մեկը, որտեղ հերոսուհին քուն չի մտնում, այլ կուրանում է: Խորթ մայրը դուրս է անում աղջկան, նրան որդեգրում է մի բարի մարդ և պահում, մինչև հեքիաթի տրամաբանական երջանիկ ավարտը³:

• 2006 թվականին իսպանական Vogue համար Ուշենիո Ռեկունսոյի ֆոտոպատումներից մեկը նվիրված էր «Քնած գեղեցկուհու» հեքիաթին: Կախարդված արքայադուստրը քուն մտավ և հենց այստեղ վերջանում է «ֆոտո տեքստը», որովհետև տեսնելով նկարում պատկերված ալեհեր կնոջը, հասկանում ենք, որ գեղեցկուհուն այդպես էլ ոչ ոք չփրկեց:

2.Սոդելները գրեթե միշտ կրում են արքայադուստրեր վայել հագուստ. թանկարժեք զարդարանք, վառ գույներ, տարբեր նախշերի ու պատկերների համադրությամբ զգեստներ, բարձր նորաձևության լավագույն նմուշները, որոնք ոչ միայն նորաձև են ու հետևում են վերջին ուղղություններին, այլ առաջարկում են այդ հագուստը կրողին տարբերվել մյուսներից՝ ցուցադրելով վերջիններիս գերադասությունը:

3.Հայտնի հեքիաթագետ Բեթելհայնը գեղեցկուհու խորը քունը դիտարկում է որպես աղջկա հասունացման և սեռական զարգացման փուլ: Հենվելով այս ենթադրության վրա՝ մոդելների ստեղծած ժամանակակից գեղեցկուհիները տարբերվում են առանձնահատուկ սեքսուալությամբ, ունեն անթաքույց գրավիչ հայացք, իսկ ընդունած դիրքերը երբեմն սադրիչ են: Երբ միջնադարյան թարգմանության ընթացքում անհրաժեշտ է լինում աղբյուր տեքստը բաժանել իմաստային շերտերի, հաճախ արդյունքը լինում է անսպասելի:

Բրյուս Հեյլի «Խնածփացնող գեղեցկուհին» հեքիաթը, անկասկած, կարելի է համարել միջնադարյան թարգմանության օրինակ: Հեքիաթում արքայադուստ-

² Vogue, Vol: March, New York, 2012

³ Jivanyan A.. *Sleeping beauties: The Rhetoric of the Female Body*. Yerevan, 2006

րը փոխակերպվում է վիշապի, որի խոնփոցն այնքան բարձրաձայն է, որ թագավորը խոստանում է մի պարկ ոսկի և իր աղջկա ձեռքն այն տղային, ով կկարողանա արթնացնել նրան: Փեսացուների շարանից հատնվում է ոչ թե արքայազնը, այլ խոզարած Ջոն, ով փրկում է գեղեցկուհուն և ամբողջ թագավորությունը այդ անտանելի ձայնից: Գրքի շապիկին պատկերված վիշապի կարմիր շրթներից, երկար թարթիչներից ու հարդարված մատներից գլխի ենք ընկնում, որ պատկերված է կերպարանափոխված արքայադուստրը⁴:

Միջնաճաշին թարգմանության հետաքրքիր օրինակ է նաև անգլիացի լրագրող Կամիլա Մորտոնի գիրքը: Այն սկսվում է այսպես. «Ժուկով-ժամանակով, ինչպես սկսվում են բոլոր ամենալավ պատմությունները, մի քաղաք է լինում՝ թաքնված Կամարգի ծովափերի և ալպյան անտառների մեջ: Այստեղ՝ Ֆրանսիայի հարավային ափին, ընկած էր Առլի միջնադարյան թագավորությունը, որտեղ ապրում էր մի հետաքրքրասեր տղա, ում անունն էր Կրիստիան Լակրուա...»: «Քնած գեղեցկուհին» հեքիաթի այս տարբերակը, հենվելով բնօրինակի հենքի վրա, պատմում է հանրահայտ դիզայներ Լակրուայի կյանքը՝ բարձր նորաձության մեջ առաջին քայլերից մինչև համանուն նորաձության տան ստեղծումը՝ կարծես հեքիաթային դարձնելով նրա կենսագրությունը: Գլխավոր հերոսը հենց դիզայներն է, ով փրկելու է արքայադստերը և ազատագրելու է կախարդված թագավորությունը՝ ոչ թե համբույրի, այլ նորաձև կերպարանափոխության միջոցով⁵: 2011թ. ավստրալացի կինոռեժիսոր Ջուլիա Լին նկարահանում է «Քնած գեղեցկուհին» էրոտիկ դրաման: Գլխավոր հերոսուհի Լյուսին ուսանող է, որը մի օր լրագրում հայտարարություն է կարդում, որ աշխատանքի են հրավիրվում երիտասարդ աղջիկներ՝ մասնավոր ակումբում աշխատելու համար, որտեղ նրանք ընդունում են թմրանյութեր, և տեղյակ չեն՝ ինչ է կատարվում իրենց հետ աշխատանքի ընթացքում: Համեմատելով «Քնած գեղեցկուհին» հեքիաթի նախատեքստն ու կինոնկարի սյուժեն, տեսնում ենք, որ ռեժիսորը թարգմանաբար պահպանել է միայն քնած աղջկա կերպարը: Ի տարբերություն հեքիաթի հերոսուհու՝ ֆիլմի գեղեցկուհին կամավոր է հայտնվում կիսամեռ, անզգա վիճակում, այն էլ պարբերաբար, և ոչ մեկի օգնության կարիքը չունի ամեն անգամ վերակեղանանալու համար:

Միայն ֆիլմի վերջում ռեժիսորը նորից է անդրադառնում հեքիաթի բնօրինակին, երբ հերթական չափաբաժինն ընդունելուց հետո, ակումբի տնօրենը ստիպված է լինում ուշքի բերել Լյուսիին արհեստական շնչառության

⁴ Hale, B., *Snoring Beauty*, New York, 2008

⁵ Morton C., *Christian Lacroix and the Tale of Sleeping Beauty*, New York, 2011

միջոցով, ինչը կարելի է դիտարկել որպես հեքիաթային համբույրի ժամանակակից փոխադրություն:

Ինչպես արդեն նշեցինք, միջնշանային թարգմանության համար հաճախ անհրաժեշտ է լինում բաժանել տեքստը իմաստային շերտերի. և թարգմանիչները իրենց ստեղծագործություններում օգտագործում են ընդամենը մեկ իմաստային հատկանիշ: Սա վառ արտահայտված երևույթ է գովազդներում: Վերցնելով հանրաճանաչ հեքիաթները՝ գովազդները յուրովի են ներկայացնում հեքիաթների առանձին իմաստային տարրերը՝ հիմնվելով այն փաստի վրա, որ շատերն են քաջ ծանոթ հեքիաթների բովանդակությանը: Ամենից հաճախ «թարգմանվում է» համբույրի միջոցով արքայադստեր ազատագրման հատվածը: Ուսումնասիրելով արվեստի տարբեր ճյուղերում «Քնած գեղեցկուհին» հեքիաթի միջնշանային թարգմանությունների օրինակները, պարզորոշ տեսնում ենք, որ բոլորին ծանոթ ստեղծագործությունն անվերջ կարելի է մատուցել նորովի՝ «ընթերցողին» առաջարկելով անսպասելի լուծումներ ու մեկնաբանություններ, որոնց զարգացման համար միակ արգելքը թարգմանչի երևակայության պակասն է:

Գրականություն

1. Jivanyan A., *Sleeping beauties: The Rhetoric of the Female Body*. Zangak-97. Yerevan, 2006
2. Morton C., *Christian Lacroix and the Tale of Sleeping Beauty*. HarperCollins Publishers, New York, 2011
3. Steiner G. *After Babel. Aspects of Language and Translation*. Oxford University Press, Oxford, 1992
4. Vogue, Vol: March, New York, 2012
5. <http://buro247.ru/fashion/shooting/2735.html>
6. <http://www.surlalunefairytales.com/sleepingbeauty/notes.html>

Intersemiotic Translation and “The Sleeping Beauty” Variations

Russian linguist Roman Jakobson has originated the term intersemiotic translation indicating that the translator, instead of paying attention to the verbal signs, concentrates more on the information that is to be delivered. Thus, this is an activity that enables us to redesign the translation process from new and, sometimes even, unexpected points of view. We can transfer the concept of text to any work, even musical, pictorial, filmic works and so on. In these cases, too, the work is a consistent and coherent material, “a system of structures that are co-implicated at various levels, so that each element takes on a value in relation to the others” When one of the two texts in an intersemiotic translation is not verbal, the choice between the parts to be translated and those that must be sacrificed is far more apparent. Indeed, the intersemiotic translator, willing or not, is forced to divide the original text into parts.

In the world of fashion, especially in fashion advertising, “The Sleeping Beauty” is one of the most often “intersemiotically” translated texts. While dividing the prototext if this fairy tale into its feature elements we notice that the so-called phenomenon of a half-dead girl enables the fashion experts to create numerous interpretations and new depictions of the storyline. Another interesting feature of this tale that is widely used in fashion is the reasons of the girl’s mysterious condition and the options for her emancipations.